Արձանագրություն N 2
ՋԿ-ԲՄԽԾՁԲ-23/1-Ն ծածկագրով ընթացակարգի
գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 20 ապրիլի 2023թ.

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Խ. Ծառուկյանը

Հանձնաժողովի անդամներ Ա. Սիմոնյանը, Ն. Ավետյանը, Է. Բաղալյանը, Մ. Վարդանյանը և Ս. Ալեքսանյանը

Քարտուղար՝ Ա. Սարգսյանը:

Հայտերի բացման վերաբերյալ

Ջրային կոմիտեի կարիքների համար ՀՀ Շիրակի մարզում Արթիկի ջրամբարի վերակառուցման նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման ՋԿ-ԲՄԽԾՁԲ-23/1-Ն ծածկագրով ընթացակարգի հայտերը էլեկտրոնային ձևով www.armeps.am կայքի միջոցով բացվել են 2023 թվականի ապրիլի 6-ին, ժամը 16:00-ին /հրապարակումը՝ 07.03.2023թ./:

Ընթացակարգը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիմքով:

ՋԿ-ԲՄԽԾՁԲ-23/1-Ն ծածկագրով ընթացակարգին մասնակցության հայտ է (են) ներկայացրել հետևյալ մասնակից (ները)

Մասնակցի անվանումը	հասցե, հեռախոսահամար	Էլեկտրոնային հասցե
<<Ակադեմիկոս Ի.Վ. Եղիազարովի անվան ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտ>> ՓԲԸ և <<Շուշիի տեխնոլոգիական համալսարան>> հիմնադրամ կոնսորցիում	ՀՀ, ք. Երևան, Ա. Արմենակյան 125, ԼՂՀ, ք. Ստեփանակերտ Վ. Վաղաշյան 7 հեռ. 374 099426236, 374 093001030	jhhinst@mail.ru, info@shushitech.am

Մասնակցի (ների) գնային առաջարկը

ՀՀ դրամ

	Մասնակցի անվանումը	Արժեք	ԱԱՀ	Ընդհանուր գինը
Չափաբաժին 1 Նախագծերի պատրաստում, ծախսերի գնահատում - ՀՀ Շիրակի մարզում Արթիկի ջրամբարի վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայություններ պլանավորված (կանխատեսվող) գնման ընդհանուր գին 130 000 000				
1	<<Ակադեմիկոս Ի.Վ. Եղիազարովի անվան ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի	108 000 000	21 600 000	129 600 000

	ինստիտուտ>> ՓԲԸ և <<Շուշիի տեխնոլոգիական համալսարան>> հիմնադրամ կոնսորցիում			

Մասնակից(ներ)ի կողմից ներկայացված բացված յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայությունը և յուրաքանչյուր հայտի փաստաթղթերի համապատասխանությունը հրավերի պահանջներին

ՋԿ-ԲՄԽԾՁԲ-23/1-Ն ծածկագրով ընթացակարգի

Մասնակից <<Ակադեմիկոս Ի.Վ. Եղիազարովի անվան ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտ>> ՓԲԸ և <<Շուշիի տեխնոլոգիական համալսարան>> հիմնադրամ կոնսորցիումի (այսուհետ՝ Մասնակից) կողմից ներկայացված հայտում.

- դիմում-հայտարարություն՝ հավելված N 1-ում **լրացված** չէ ՀՀ ռեզիդենտ հանդիսացող մասնակցի «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքի համաձայն՝ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում գրանցած՝ իր իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող **կայքէջի հղումը***,
- Ընկերությունների Կոնսորցիումի Պայմանագրի 1-ին կետի 1.1 ենթակետի ե. պարբերությունում նշված է, որ <<Կոնսորցիումի յուրաքանչյուր կողմ ունի Քաղաքաշինական փաստաթղթերի ինժեներական բաժինների մշակման «Հիդրոտեխնիկական օբյեկտների նախագծային փաստաթղթերի՝ հիդրոտեխնիկական կառույցներ և համակարգեր» լիցենզիա, սակայն Գործընկեր 2-ի լիցենզիան ներկայացվել է այլ ոլորտի,
- Ընկերությունների Կոնսորցիումի Պայմանագրի 1-ին կետի 1.1 ենթակետի ա. <<Մասնագիտական փորձառություն>> պարբերությունում նշված է, Գործընկեր 1-ի և Գործընկեր 2-ի համատեղ գուծունեության մասին և որպես նմանատիպ փորձառությունը հիմնավորող փաստաթուղթ ներկայացվել է Գործընկեր 2-ի կողմից կատարված նմանատիպ աշխատանքների պայմանագիրը, անհրաժեշտ է հստակեցնել <<Մասնագիտական փորձառություն>> չափանիշի մասով հանդես եկող Գործընկերոջը:

*ՀՀ ռեզիդենտ հանդիսացող մասնակիցը դիմում հայտարարությունը լրացնելիս նշում է «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքի համաձայն՝ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում գրանցած՝ իր իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը:

Հանձնաժողովի որոշում.

Համաձայն «ՋԿ-ԲՄԽԾՁԲ-23/1-Ն» ծածկագրով ընթացակարգի 8.9 կետի՝ հանձնաժողովը 17.04.2023թ. մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը և մասնակցին առաջարկել մինչև կասեցման ժամկետի ավարտը՝ այն է 18.04.2023թ. շտկել անհամապատասխանությունները:

Հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացրել է Մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը, այն է 18.04.2023թ. շտկել անհամապատասխանությունները:

Մասնակիցը սահմանված ժամկետում (18.04.2023թ.) շտկել է արձանագրված անհամապատասխանությունները:

Հանձնաժողովի որոշումը

Հիմք ընդունելով գնահատման արդյունքները հանձնաժողովը որոշեց.

1. Հաստատել <<Ակադեմիկոս Ի.Վ. Եղիազարովի անվան ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտ>> ՓԲԸ և <<Շուշիի տեխնոլոգիական համալսարան>> հիմնադրամ կոնսորցիումի գնահատման արդյունքները.

Խորհրդատու(ներ)	Տեխնիկական առաջարկի միավորը	Մասնակցին տրվող գնահատականը (տեխնիկական և ֆինանսական)
<<Ակադեմիկոս Ի.Վ. Եղիազարովի անվան ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտ>> ՓԲԸ և <<Շուշիի տեխնոլոգիական համալսարան>> հիմնադրամ կոնսորցիում	Միջին Գնահատական	Ամփոփ գնահատական
Չափաբաժին 1	87.26	91.1

2. ՋԿ-ԲՄԽԾՁԲ-23/1-Ն ծածկագրով ընթացակարգի (Չափաբաժին 1) ընտրված մասնակից հայտարարել <<Ակադեմիկոս Ի.Վ. Եղիազարովի անվան ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտ>> ՓԲԸ և <<Շուշիի տեխնոլոգիական համալսարան>> հիմնադրամ կոնսորցիումը,

3. Հրապարակել հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին («Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետը կիրառելի չէ):

4. Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության հրապարակման հաջորդող չորրորդ աշխատանքային օրը ծանուցել ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը

Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ըստ անհրաժեշտության, որը տեղի կունենա Ջրային կոմիտեի վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Վարդանանց 13ա, նիստերի դահլիճ:

Ընդունվել է որոշում՝ կողմ-6, դեմ-0

Գնահատող հանձնաժողովի՝

Նախագահ	_____	Խ. Ծառուկյան
	_____	Ա. Սիմոնյան
	_____	Է. Բաղալյան
	_____	Ն. Ավետյան
	_____	Մ. Վարդանյան
	_____	Ս. Ալեքսանյան
Քարտուղար	_____	Ա. Սարգսյան